ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2005թ. մարտի 18-ի թիվ 1 նիստում

ԳԽ ՆԱԽԱԳԱՀ, ԻՄ ՏՆՕՐԵՆ
Մ.Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ

Ընդհանուր դրույթներ

1. Գրադարանը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կառուցվածքային ստորաբաժանումներից է:
2. Գրադարանի ֆոնդերը համարվում են ՀՀ պետական սեփականություն:
3. Գրադարանից օգտվելու իրավունք ունի համալսարանի ողջ անձնակազմը: Կողմնակի անձինք կարող են օգտվել միայն գրադարանի վարիչի թույլտվությամբ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Հիմնական խնդիրներն են

1. ԵՊՀ ԻՄ ընթերցողական համակազմի գրական-տեղեկատվական սպասարկում՝ համալասարանական պահանջների և արդի գրադարանավարության չափանիշներով:
2. Գրադարանային ֆոնդերի շարունակական ձևավորում և համալրում ուսումնական գործընթացներին համապատասխան:
3. Տեղեկատու-մատենագիտական ապարատի կազմակերպում (քարտարան):
4. Գրադարանային ծառայությունների շրջանակների ընդարձակում, ավտոմատացում:

Գրադարանի գործառույթներն են

1. Ուսումնական գրադարանի գրանցում ընթեցողական միասնական տոմսի միջոցով:
2. Գրականության սպասարկում ընթերցողների կազմին և պահանջարկին:
3. Անմիջական օգնություն ընթերցողին՝ գրականություն որոնելու, ընտրելու, նորույթներին իրազեկ դառնալու գործընթացներում:
4. Գրադարանային ֆոնդերի ձևավորում և նպատակաուղղված համալրում համալսարանում գործող ուսումնական պլաններին, ծրագրերին համապատասխան:
5. Ֆոնդի ուսումնասիրում, վերադասավորում, քայքայված, արդիականությունը կորցրած գրականության զտում:
6. Ֆոնդերի պարբերական վերլուծություն ամբիոնների մասնակցությամբ, ուսումնական գրականության ապահովվածության ճշտում:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանը կազմված է հետևյալ բաժիններից.

1. Համալրման
2. Հաշվառման և մշակման (դասակարգման)
3. Գրապահոց

- Գրադարանն անմիջականորեն ենթարկվում է մասնաճյուղի տնօրենին (հր. 03.03.2003թ.թիվ 45)
- Գրադարանի հաստիքակազմը հաստատում և փոխում է տնօրենը:
- Գրադարանի ղեկավարումն իրականացնում է վարիչը, որն անմիջապես ենթարկվում է տնօրենին նշանակվում և ազատվում է պաշտոնից տնօրենի կողմից:
- Վարիչը գրադարանի աշխատանքների համար կրում է լրիվ պատասխանատվություն իր իրավասությունների շրջանակում, տալիս է հրահանգներ, որոնք պարտադիր են գրադարանի բոլոր աշխատողների համար:
- Գրադարանի աշխատողները պատասխանատու են գրքային ֆոնդերի պահպանման համար գործող օրենքների շրջանակներում: